ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1953 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՆՈՐԱՇԱՅՏ ԷՋԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստորև հրապարակվող «Մի ավանդություն» հոդվածը և տասներկու անեկդոտները Հովհաննես Թումանյանի առաջին տպագիր ելույթներն են մամուլում, որոնք, սակայն, մինչև այժմ անհայտ են մնացել ոչ միայն ընթերցող շրջաններին, այլև մասնագետ-գրականագետներին: Դրա պատճառն այն է, որ բոլոր այդ նյութերը ժամանակին տպագրվել են անստորագիր, իսկ հետագայում Թումանյանը այլևս չի վերադարձել դրանց, նրա հոդվածներում ու նամակներում այդ մասին որևէ վկայություն կամ ակնարկ չի պահպանվել: Ու թերևս այս էջերը մեկընդմիշտ կորչեին թումանյանագիտության համար, եթե չլիներ մի անառարկելի փաստ: Բարեբախտաբար, Թումանյանի պատանեկության ու երիտասարդական տարիների ամենամտերիմ ընկերներից մեկը՝ Անուշավան Արովյանը իր հուշերում համապատասխան վկայություն է թողել այդ մասին: Գրականության և արվեստի բանգարանում ձեռագիր վիճակում պահպանվող այդ հուշերում («Իմ հիշատակարանը») կարդում ենք այսպիսի տողեր. «Թումանյանը առաջին անգամ գրական ասպարեզ մտավ «Նոր-դար» օրաթերթում մի նամակ տպելով Դսեղ գյուղի ընդհանուր նկարագրությամբ և գյուղացիների նիստ ու կացի մասին: Այնուհետև սկսեց լոռեցիների կյանքից մի շարք անեկդոտներով ողողել «Նոր-դարի» էջերը»: Ահա և բոլորը: Ինչպես տեսնում ենք, Ան. Արովյանը չի հիշատակում այդ նյութերի վերնագրերն ու հրապարակման ժամանակը, բայց պարզ է, որ խոսքը վերաբերում է 80-ական թվականների երկրորդ կեսին (մինչև 1890 թվականը, երբ Թումանյանն արդեն հրապարակ իջավ իր պոեմների ու բանաստեղծությունների առաջին գրքով):

«Նոր-դարի» մի քանի տարիների կոմպլեկտներում կատարած որոնումները լիովին հաստատեցին Ան. Արովյանի հաղորդածը. պարզվեց, որ այդ թերթի 1887 թ. հուլիս-օգոստոս ամիսների մի շարք համարներում իրոք տպագրված են նրա հիշատակած նյութերը: Դա մի անստորագիր (ավելի նշգրիտ՝ երեք աստղանիշով ստորագրված) հոդված է Դսեղ գյուղի աշխարհագրական դիրքի, կենցաղի, հնությունների մասին՝ «Մի ավանդություն» վերնագրով (№ 136) և 12 փոքրիկ անեկդոտանման պատմություններ լոռեցիների կյանքից (№ № 121, 132, 133, 134, 136, 137, 140): Հոդվածի և անեկդոտների բովանդակությունը, ինչպես նաև հեղինակի վկայությունը իր դսեղցի լինելու մասին, ոչ մի կասկած չեն թողնում, որ դրանք իրոք Թումանյանի առաջին տպագիր այն ելույթներն են, որոնց մասին հիշում է նրա բարեկամը:

Հրապարակվող նյութերը նոր լույս են սփռում մեր ազգային մեծագույն բանաստեղծի գրական բեմելի վրա, որը տեղի է ունեցել 1887 թվականին, այլ ոչ թե 1890-ին, ինչպես ընդունված է եղել մինչև այժմ: Եվ նշանակալից է, որ իր առաջին իսկ տպագիր ելույթներում ապագա մեծ բանաստեղծն արդեն դրսևորում էր իր բուռն հետաքրքրությունը ժողովրդի պատմության և ներկայի, կյանքի ու կենցաղի, ավանդությունների, կենդանի բառ ու բանի նկատմամբ:

Թումանյանի հոդվածն ու անեկդոտները հրապարակվում են ըստ «Նոր-դարի» տեքստի, պահպանելով ուղղագրության և կետադրության առանձնահատկությունները:

ԷԴ. Մ. ՋՐԲԱՇՅԱՆ

ՄԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Շատ անգամ պատմության մութ կետերը մեզ պարզաբանում և լրացնում են ավանդությունները ու արձանագրությունները: Բայց տարաբաղդաբար մեր ժողովուրդը դեռևս միայն ինքն ասում ու ինքն է լսում իրեն «պապական խոսքը»՝ ավանդությունը: Գյուղացու պատմախոսի՝ ավանդապահ ծերուկի ձայնը դուրս չեկավ իրեն օդայի չորս մրոտ պատերից: Ճշմարիտ է, թեև եղան ան-

ձեր, որ փորձեր ա.ին այդ գործով զբաղվելու, բայց նրանք էլ դեռ ևս մի որոշ քայլ չարին և դեռ շատ հեռու են իրենց նպատակին հասնելուց, հետևաբար դեռ մեր դրականության մեջ համարյա բոլորովին անմշակ և նույնիսկ պարապ է նրա տեղը։ Մեր պարբերական թերթերը, մանավանդ «Նոր-Դար»-ը, հորդոր են կարդում, և հաճախակի հիշեցնում այդ թերին լրացնելու մեծ անհրաժեշտությունը, հավաքելով ժողովրդի հոդու և մտավոր ստեղծագործության արդյունքները։ Անկասկած սա ուրախալի երևույթ է, և ինչպես երևում է, այդ ձայնը սկսում է արձագանք տալ։ Անշուշտ սա պետք է համարել ուրախալի երևույթ. ցանկանում ենք սրտագին, որ «ասողին ճշմարիտ լսող լինի»։ Ժողովուրդը շատ նյութ ունի տալու ամեն մեկին։

Դեռ շատ պատմական տեղեր մեր հայրենիքում մնացել են անհայտ ոչ միայն գիտնական աշխարհին, այլ և մեր գրագետներին։ Այդ դասին է պատկանում և Լոռին՝ շնորհիվ յուր անմատչելի, ամուր դրքի, որ մինչև այսօր պահել է ժողովրդի դյուցազնական ոգին և ստեպ ստեպ ավազակներ, «իգիթներ», «աժդահաներ» է հարուցել և հարուցանում, իսկ վերջիններս «շլապկավորի» հետ չունին և նրանց գյուր գալու համար պետք է իրենց տարազով երևալ նրանց ձորերում։ Շատ անգամ հարցասերին չեն պատասխանում և թե պատասխանում են ծուռ ու սխալ, որովհետև վախենում են մի «խաթաբալա» չի դուրս գա մեջիցը։

Դսեղ գյուղը գտնվում է Լոռում, Ջորագետ (Բերդուշ կամ Դեբեդ) գետի աջ ափի վերա, այնտեղ՝ ուր նրա երկու մեծ ճյուղերը միանում են։ Նա կղզիացած է Լոռու անդնդախոր ձորերի մեջ գտնվող մի փոքրիկ հարթավայրի վերա, երեք կողմից ձորերով, ժայռերով և չորրորդ կողմից՝ հարավից մի փոքրիկ լեռնաշղթայով պատած։

Դսեղ բառը կարծելի է, որ «դուրս տեղ» բառերից լինի կրճատված յուր զատված գրքի հարմար։ Բնակիչները զուտ հայեր են՝ հարյուր տնից ավելի։ Դսեղը հայտնի է յուր «իգիթներով», բնակիչների կյանքի սահմանը իրենց երկրագործական մաճն է, հովվական մահակը և որսորդական հրացանը։ Խոսելով փոքր ի շատե Դսեղի մասին իմ նպատակս է պատմել մի ավանդություն, որ իրրև տեղացի լսել եմ ծերերից։

Ավանդությունը սուրբ ու անշփոթ պահելու համար անհրաժեշտ են երկրի ամուր դիրք և ժողովրդին խաղաղ կյանք. բազմահալած մի ժողովուրդ չէ կարող սուրբ ու անշփոթ պահել յուր «պապական խոսքը»՝ ավանդությունը։

Դսեղի գիրքը իսկապես շատ ամուր է, սակայն բազմաթիվ ավեռակները ապացույց են, որ աշխարհալեր փոթորիկներ են անցել այս տեղով և ինչ ասել կուզե որ միայն շինությունները չեն ենթարկվել նրանց կործանիչ ազդեցության։ Այդ ամուր անկյունում ևս անպակաս է եղել խռովություն, սուր և հալածանք։ Նրա բնակիչները ցրվել են զանազան կողմեր և այժմ ամբողջ գյուղեր են կազմում։ Եղել է ժամանակ, որ գյուղն ամայի անմարդաբնակ է մնացել և բնակիչները գաղթել են ժամանակավորապես, օրինակ Վրաստան։ Դսեղ գյուղի հին նշանները ցույց են տալիս, որ նա եղել է երբեմն մեծ և հարուստ։ Գյուղից շատ ու քիչ հեռավորության վերա գյուղացիները շինության համար քար հանելու ժամանակ գետնի տակից գտնում են տան պատեր, զանազան տեսակ ամանի կտորներ և այլ իրեր։ Գյուղացիներից մեկը օրինակ տան տեղ փորելու ժամանակ գտավ գետնի տակ երկու մեծ սենյակի տեղ՝ սալած բավական մեծ մեծ կարմիր ներկած աղյուսներով. մի կողմը կար մի փոքրիկ տաշտաձև ա-

վազան քարյա՝ իսկ մեջ տեղը մի աղյուս չորս մաս բաժանած գծերով և ամեն մասում մի կնիք և մի տառ (ոչ հայերեն), որոնց նշանակությունը դեռ չէ բացատրված։ Ժբաղդաբար չկարողացա ընդօրինակել այդ, որովհետև վերան ցորենի շտեմարան էր շինած։ Գյուղացիները այդ տան տեղին «Թագավորի աղջկա բաղնիս» են անվանում։ Գյուղի շրջակայքում կան շատ հանգստարաններ, որոնցից մի քանիսն արդեն անհատացել են և տեղերը երկրագործի խոփն է վարում։

Գյուղի մեջ գտնվում են երկու հանգստարաններ՝ հին և նոր։ Հինը, որ բավականին մեծ է, լիքն է խաչարձաններով։ Այդ խաչարձաններից նշանավոր են երկուսը բարձրությամբ մոտ երկու սաժեն։ Նրանցից մեկը խաչարձանն է կանգնած երեք մեծ քարերից կազմած պատվանդանի վերա. նրա գլուխն ևս, որպես առհասարակ խաչարձաններինը, խոնարհեցրած է, զուցե անձրևից պահպանելու համար, և կոչվում է «ծածկան» (ջոկ քար է)։ Նրա քանդակները շատ նուրբ են։

Խաչարձանի ճակատին (ծածկանի վերա) քանդակած է Փրկիչը նստած դիրքով աջ ձեռքով բարձրացրած, իսկ ձախ ձեռքին բռնած մատգաղաթ՝ վերան գրած «Ես եմ լույս աշխարհի», շուրջը այլ պատկերներ և ներքև կա խաչած Հիսուսը. խաչի գլխին գրած է «Սա է Թագաւոր հրէից», աջ կողմից մի աջ և մի աղավնի, շուրջը «Աջ Տեառն և հոգի Աստուծոյ». ապա խաչյալ Հիսուսի բևեռած մի ձեռքից մինչև մյուսը խաչի վերա «Ձեռք որ զերկինս արարին տարածեցան ի խաչիս». խաչի մի կողմը կանգնած են «Հովհաննես» և «Նիկոդիմոս», մյուս կողմն «Աստվածածին» և «Հովսեփ», ձեռքին «կտավ». խաչի ներքև գլուխն է «Ադամ»-ի։

Պատվանդանի վերա կա հետևյալ արձանագրությունը, որ իսկապես մեր ուշադրության ամենից ավելի արժանի մասն է։

Ի թվ. ՉԼ.

Ողորմութեամբն Աստուծոյ ես Տէրունս որդի Խարբլին իմ աղբէրացովս կանգնեցի դխէչս յանուն Գրիգորոյ որ զուր և դառն մահուամբ ի Քրիստոս փոխեցաւ որ է պարծանաց և զմարդոյ եղբայր մեր որք երկրապագէք յաղաւթս յիշեցէք», պատվանդանի ձախ երեսին՝ «Վահրամ յիշեցէք»։

Նույն հանգստարանում հիշյալ արձանից դեպի արևմտահյուսիս գտնվում է մի այլ արձան չորս անկյունի և չորս երեսն ևս քանդակած։ Այդ քանդակների նշանակությունը զանազան կերպով են բացատրում գյուղացիները։

Նրա պատվանդանի վերա կա հետևյալ բավական անմիտ արձանագրությունը. «Ես Վահրամ զատար շինաբ քաննկ թողի վկայ ապնայն Գագկայ Խորիշահ ով խափանէ յժը հայրապետաց նղովեսցի Տէր Աստուած ողորմի մխիթարչինն»։

Գյուղացիները մեր շինած երկու հուշարձանները համարում են քույր և եղբոր խաչարձաններ։ Առաջինին եղբայր—Լուսավորիչ, երկրորդին քույր—Աստվածածին անվանելով։ Այժմ մենք կաշխատենք գտնել, արդյոք այդ ավանդությունը հիմը ստանո՞ւմ է մեր պատմագրերից ևս։

Առաջինի արձանագրությունից իմացանք, որ զուր ու դառն մահվամբ ի Քրիստոս փոխված մի անձավորություն է Գրիգոր անունով. իսկ երկրորդից չիմացանք, թե Գագիկի՞նն է թե Խորիշահինը։ Եթե ենթադրենք, ժողովրդի ա-

վանդությունը ճշմարիտ է, և քույր ու եղբայր են դրանք, ուրեմն այս մահարձանն էլ քրոջ համարելով՝ կարող է Խորիշահինը լինել և ոչ Գագիկինը, որովհետև Խորիշահ կնոջ անուն է և ոչ Գագիկ։ Սակայն ո՞վքեր են դրանք։

Մեր կարծիքով, առաջինը պետք է լինի Գրիգոր Մամիկոնյան Մարզպանը՝ որ ապրում էր ԺԲ դարում և Խորիշահը՝ նրա քույրը։ Դսեղ գյուղին մոտերքը գտնվող սուրբ Գրիգոր կոչված մի վանքի արձանագրության մեջ հիշված է «ԹՎ. ՈՂ. Գրիգոր որդի Մարծպանայ...»—«ԹՎ. Ոկզ-ես Կոստանդ որդի Գրիգոր թոռն Համազասպայ...»։ Իսկ մեր պատմիչներից էլ Կիրակոս պատմագիրը, որ ժամանակակից էր Գրիգոր Մամիկոնյանին և Սանահին էր ուսանում վանական վարդապետի մոտ, որ նույնպես մոտ է Դսեղին, Նետողաց ազգի սովորությունները պատմելուց հետո գրում է. «Զայս ամենա ն պատմեաց մեզ Գրիգոր Մամիկոնյան...» Մի ուրիշ տեղ ևս. «Ցետ Համազասպայ եղև Մարզպան Հայոց Գրիգոր Մամիկոնեան ամս տասն զոր սպանեն իազերք...» Նույն դարու պատմաբաններից շատերն են հիշում այդ Գրիգորին։

Իսկ երկրորդը—Աստվածածինը, պետք է լինի սրա քույրը—Խորիշահը, որպես հիշած է սուրբ Գրիգորի արձանագրության մեջ «Ամբլեա դայեակ Խորիշահի դստեր Մարզպանայ...», իսկ մենք գիտենք, որ վերոհիշյալ Գրիգորն ևս Մարզպանի որդին էր։ Կիրակոս պատմագիրը գրում է... «զոր Քուրդ անուանէին հայ ազգաւ կրօնիւք քրիստոնեայ և որդիք իւր Վաչե և Հասան և կին նորա Խորիշահ յազգէ Մամիկոնէից դուստր Մարզպանայ քոյր Ասլան-Պէկին և Գրիգորոյ...»։

Մենք կարծում ենք, որ հուշարձանների և ս. Գրիգորի անունով վանքի արձանագիրները և Կիրակոս պատմիչի խոսքերը բավական հաստատություններ են՝ որ այդ գերեզմանները Մամիկոնյան Գրիգորինն և նրա քույր Խորիշահինն են։ Սակայն լսենք, թե ժողովուրդը ինչ ձևով է պատմում այդ ավանդությունը։ Մամիկոնյանները ԺԱ և ԺԲ դարերում գոյություն ունեին Դսեղ գյուղում և այնտեղ իրենց համար կալվածներ ունեին որպես հիշված է արձանագրություններ-ի մեջ, որոնցից հայտնի են Ասլանբէկ և Գրիգոր՝ որդիք Մարծպանայ. Համլիկ որդի Սմբատայ, Մարծպան որդի Սարգսի, Սարդիս որդի Սմբատայ, որդւոյ Համազասպայ-Մարծպանայ, Կոստանդ որդի Գրիգորի թոռն Համազասպայ. Համազասպ Մամիկոնեան. Վասակ որդի Սմբատայ։

Բայց ահա և ավանդությունը։

Մի ժամանակ, երբ Հայոց թագավորությունը առռեն մերջացել էր, ամեն մարդ ինքն յուր գլխի տեր և թագավոր էր համարում։ Ահա այս Լուսավորիչն էլ այն ժամանակ յուր համար զորք ու տերություն «սարքած» ժողովուրդը խաղաղ կառավարում էր ու «թշնամու աչքը հանում»։ «Անօրենները» որպես իրենց սովորությունն էր հավաքվել էին իրանց երկրիցը, «չու քաշել» ուրիշ աշխարհներ էին քանդում ավարառության ու սպանության համար։

Այս Լուսավորիչը (Գրիգորը), որ մի խելոք, արթուն ու քաջ մարդ է եղել, պահապաններ է կարգել սահմաններումն ու Դդի* գլխին մարդիկ է գրել, որ եթե մի անսովոր շարժում տեսնեն՝ զանգահարեն, իմաց անեն իշխանին։ «Անօրենները» եկան մոտեցան մեր երկրի սահմանին և իմացան Լուսավորիչ իշխանի

* Դդի երեի դեռ, դիտել բառիցն է հորինված։ Այդպես կոչվում է Դսեղ գյուղի մոտ գտնված մի փոքրիկ բլուր։

զորության, քաջության մասին։ Նրանց գլխավորը, որ մի խորամանկ և խելոք մարդ է եղել, կանգնեցրել է յուր զորքին ու ասել. «քաջությունը երկու տեսակ է, նրանցից մեկը բաղկի է, որի զորությամբ հասել ենք մինչև այստեղ, իսկ մյուսը՝ խելքի, որ գերազանց է բաղկի քաջությունից. շատ բաներ պատմում են այս երկրի իշխանի ու ժողովրդի քաջության մասին և դուք տեսնում էք, թե որքան անմատչելի է երկիրը։ Ասում են, որ այդ իշխանը պահակներ, դիտողներ ունի կարգած և մենք մինչև առաջ դրանց չձեռք բերենք՝ չենք կարող մոտենալ իշխանական շենին»։ Այսպես խոսեց և յուր զորքերից կորովիները մի խումբ կանացի շորով՝ ներքուստ զինվոր, ճանապարհ ընկան իրենց տիրոջ հրամանը կատարելու։ Մնացած զորքը նույն տեղում պետք է սպասեր մինչև գիշերվա հասնելը։ Ուղարկված զինվորները հասան և կանացի շորով իբրև ուխտավոր ամեն բան վերջացրին իրենց տիրոջ հրամանի համեմատ —«պահակներին ու դիտողներին սպանեցին»։ Յուր ապարանքում քնած միջոցին բարբարոսները հարձակվում են վայրենաբար շենի վերա։ Գրիգոր իշխանը աղմուկ լսելով, վեր թռավ առավ յուր սուրը և վազեց թշնամու առաջ, բայց արդեն ուշ էր զորքը կարդի բերել. սարսահար ժողովրդի մի մասը փախան ձորերը, մի մասը կռվեց և մեռան այն տեղ, սպանվեցավ և Գրիգոր իշխանը։ Նրա քույրը (Խորիշահ) լսելով այս, սուր առավ և վազեց եղբորն օգնություն, կռվեց և նա ևս սպանվեցավ այնտեղ և քույր ու եղբայր թաղվեցան ուր որ ընկան։ Անօրենները ավերեցին, քանդեցին շենը, որը կրակեցին, որը ավար առան ժողովրդի ստացվածքից»։ Ժողովուրդը արձան կանգնեց յուր քաջ նահատակների վերա և հարգեց ու որդոց որդի ավանդեց նրանց արարքն ու վախճանը մեզ։

Ինչպես ընթերցողը տեսնում է, այս ավանդությունը ամենևին չէ հակառակում Կիրակոս պատմագրի պատմածին՝ Գրիգոր Մամիկոնյանի մահվան մասին։

Այս բոլորը ի նկատի առնելով, մեզ համար անկասկածելի է, որ հիշյալ խաչարձանները պատմական հիշատակներ են Գրիգոր Մամիկոնյանի և նրա Խորիշահ քրոջ վերա։

* * *

[«Նոր-դար», 1887 թ. 15 օգոստոսի, № 136]

(ՄԵՐ ԵՐԿՐԻ ԿՅԱՆՔԻՑ)

Լոռեցու դատը.— *Մի լոռեցու տան առաջից հարևանի խոզն անցնելիս շունը հասնում բուդը պատռում է, խոզի ճղղոցին տերը դուրս է գալիս և շնատիրոջը հայհոյելուց հետո գնում է քյոխվին գանգատվում։*

Քյոխվեն իսկույն կանչում է շնատիրոջը և հանդիմանելուց հետո վճռում է որ տուգանք տա խոզատիրոջ։ Շնատերն իրեն պաշտպանում և արդարացնում է. «քյոխվա ջան, գլխիդ ղուրբան, որ ես խոզ ըլեմ դու շուն, ձեր դոնովն խրթխորթալե անցկենալիս չե՞ս բուդս շոթի»։

«Չէ՛, էս բալամի ասածն կլա ըղորթ», վճռեց քյոխվեն և տուգանքից ազատեց շնատիրոջը։

* *

Լոռեցու օրհնանքը.—*Մի լոռեցի անցնելիս հարևանը հրավիրում է թաժա հաց ուտելու. «Աղա՛, Սաքո դեսըն արի՛, տաք հաց կտրիր».— Շնորհա-*

կալ եմ քի մատաղ, խաղաղ եմ, ձեր տաք հաց Աստոծ կտրի», պատասխանում է անցվորը։

* * *

Մի լոորցու իրան թշնամին պատահում է դաշտումն, սաստիկ ծեծում ու հեռանում, նրա հեռանալուց հետո գլուխը բարձրացնում է ծեծվածը և տեսնում մեկ մարդ է գնում դիմացը, ձայն է տալիս նրա ետևից. «Ա՛յ դիմացի գնացող հե՞յ, քի մատաղ ուշկս վրես չէր, էս կնկհավատը շա՞տ էլ տվուց ինձ թե չէ»։

[«Նոր-դար», 1887, 24 հուլիսի, № 121]

* * *

Մի քանի լոորցի ճանապարհի վերա մի հատ կոշիկ են դտնում։ Այս ի՞նչ կը լինի, ի՞նչ չի լինիլ... բայց և ոչ մեկը չէ կարողանում բացատրել թե ի՞նչ բան է դա։

— Ինչ որ ա քյոխվեն անպատճառ կիմանա, որոշում են նրանք և բերում ցույց են տալիս քյոխվին։

— «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հեգնում է քյոխվեն, ըտե՞նց պտեք դուք աշխարքրմը կառավարվի:, բա հլե՞ ինչը հասկանըմ չեք՝ էս է՞լ չեք հասկանում ի՞նչ ա»։

—«Հա դե մենք ինչ տենք հասկանալ, բոի մարդիկ ինք, դու մարթ ես տեհել, աշխար ես տեհել, պրիստավի կուշտն էս գնացել, էտ ի՞նչ ա»։

— «Քլնդի բուն ա ի՞նչ ա», բացատրում է հասկացող քյոխվեն։

[8 օգոստոսի, № 132]

* * *

Լոորցի հովիվը ձայն է տալիս մի սարից դեպի մյուսը, իրեն ընկերին։

— «Հե՞յ յ Համբո, Համբո, ադա, քե մատաղ, էն ըքանդ ոքին ասա ձեր իքն ըքել ա իքա ըքել եկեք ըքեցեք, թե չէ էն իքը կը դա կ՚ըքի, կասեք դուք եք ըքել» ա սինքն, էն Մարկոսանց Ղուկասին ասա ձեր էծը ծնել ուլ է բերել, եկեք տարեք թե չէ գայլը կըգա կուտի, կասեք դուք եք կերել։

[12 օգոստոսի, № 133]

* * *

Լոորցու մեկը, մի ուրիշ դյուղացի աղջկա հետ նշանադրված լինելով՝ գնում է մի օր աներանց գյուղը նշանածատես: Որովհետև ամառնային ժամանակ է լինում, տանեցիք բոլորը կալումն են լինում, բացի մեր երիտասարդի նշանածից՝ որը նրա բաղդից, միայնակ տանն է լինում և սրահը ավելով սրբում։

Երիտասարդը ցանկանալով մի շատ քաղցր, սիրային խոսքով դեպի իրեն դրավել յուր սիրուն նշանածի ուշադրությունը, ասում է «ի՞ ի՞ Մարյա՛ն ջան, գա՞մ-գա՞մ էդ ձեռիդ ավիլն ուտեմ»։— «Ի՞մ հորանց էշը խում չե՞ս»—պատասխանում է զայրացած Մարիամը։

[13 օգոստոսի, № 134]

* * *

Գիշերը գողերը մի լոռեցու գոմի պատը քանդում են և կովը հանում այնտեղից։ Առավոտը տիրոջ հետ հավաքվում է ժողովուրդը և խորհուրդ են անում, թե ո՞վ կըլինի տարած, բայց չեն իմանում։ Վերջապես վճռում են քյոխվին դիմել։ Գալիս է քյոխվեն, նայում, գլուխը պտտում ու հավաքված ամբոխին հանդիմանելով մարգարեանում է՝ «ըրմանըմ եմ ես ձեզանից, բա մարթիկ չեք, հաց չեք ուտըմ, էս ինչ դժար իմանալու բան ա, ով որ էս պատը քանդել ա նա կլի տարած»։— Ա՛յ, այ, որ ասի քյոխվեն կրգիդենա, դարձան միմյանց կանգնողները։

* * *

Մի լոռեցի ձայն է տալիս խոզարածին—Հե՜յ՜յ՜, Սարո, Սարո՜ո՜. ադա, չալ մերունը դվեր արա, դվեր արա՜:

— Ադա ո՞ր չալ մերունը, ո՞ր։

— էն որ աճարկուտումը աղլը բռնել էր։

— Ինչի մհար դվեր անեմ, ընչի՞։

— Ադա պապը մեռել ա ժամ անենք, ժա՜մ, ժա՜մ։

— Ադա խի ա մեռե՜լ։

— Ըլդըդան ա կերել, ըլդրդա՜ն։

[15 օգոստոսի, № 136]

* * *

Մի աղքատ լոռեցի «կալոցին» բարեկամից մի եզն է խնդրում յուր ունեցած մի եզի հետ լծելու, որ կալերը կասելուց հետո կրկին վերադարձնել։ Բարեկամը չէ մերժում։ Աղքատը մի կորեկի արտ է ունենում, մի օր գնում է տեսնում, որ տրորած ու կերած է արտը. «Անպատճառ արջն է արել», մտածում է ինքն իրան և գալիս հրացանը վերցնում գնում թաքնվում արտում, որ արջին սպանի։ Գիշերը տեսնում է որ արջը մտավ արտը և սկսեց ուտել ու տրորել, արձակում է հրացանը, գնդակահար արջը ընկնում է։ Իսկ ինքը մտածելով, թե չիցէ վիրավորված լինի արջը ու վնաս տա իրեն, սկսում է փախչել։ Առավոտը գնում է տեսնում, որ յուր բարեկամից խնդրած եզն է սպանել։

[19 օգոստոսի, № 137]

* * *

Լոռեցին ու աշտարակցին հնձում էին միասին։ Ճաշի ժամանակ մածուն բերին հնձվորների համար, որոնք մածնաբրթուճը պատրաստելուց հետո տեսան, որ գդալը մի հատ է երկուսի տեղ։ Գդալակոզի-դդալփոխ անելու լոռեցին չհամաձայնեց, ասելով, ես դդալով կուտեմ, դու ձեռքով կեր։ Ի վերջո վճռեցին որ յուրաքանչյուրը իրենց գյուղերից յոթի անունը տան միմյանց ետևից, ով որ շուտ ասե՝ գդալը տան նրան,— լոռըցին վերա տվեց—Դսեղ, Ուցուն, Մարց. Ագարակ, Ըերդ, Ամրակից, Գյուլաքարակ, խաշրդի բելա դեարաք. (գդա՛ը դեսն արա)։ Աշտարակցին չէր հասե կեսը՝ որ լոռըցին լպստեց թասը. Բայց այս անեկդոտը աշտարակցին պատմում է ուրիշ կերպով. վեճը միևնույն առարկայի վերա է. միայն այս դեպքում հաղթողը աշտարակցին է։ Աշտարակցիները հայտնի են իրենց ճարպիկ լեզվով և սրամտությամբ։ Մեր իմացած

դեպքում աշտարակցին վերա է տալիս՝ Ուշի, Օշական, Փարրի, Բյուրական, Թալին, Թալիշ, Մաստարա, գդալի պոչը դեսն արա։

* * *

Մի լոռցի գալիս է քաղաք և տեսնում է որ բոլորն էլ զարդարված են, երբ վերադառնում է զարմացած պատմում է հայրենակիցներին.

— Պաա՛, պա՛, պա՛, ձեզ մատաղ, քաղկցիք չիմ էլ նոր են հրսանիք էլել։

* * *

Լոռցի տիրացուին պարտամուրհակ (թամասուկ) տվին կարդալու և նա ա սպես ասեց.

— «Սիրելի հայր իմ, շատ սիրով»..,

— Ինչ ես կարթըմ տիրացու, ահրըմ էս թամասուկ ա,— ընդհատեց տվողը։

— Հեր օխնած, դե ասա՛ թամասուկ ա որ թամասուկավարի կարթամ է՛, հանդիմանեց տիրացուն և սկսեց թամասուկավարի կարդալ։

[22 օգոստոսի, № 140]